Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրի **«Հաշվապահական հաշվառում»** մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների մրցույթ:

Մասնագիտական մոդուլ	**Ժամերը**
Հաշվապահական հաշվառման հիմունքներ	122
Ծախսումների հաշվառում	126
Վարձակալության հաշվառում	126
Գյուղատնտեսական գործունեության հաշվառում	108
Հետագա չափում, արժեզրկում	108
Ընդամենը թափուր ժամեր	**590**

բ) *Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ*

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող («Հաշվապահական հաշվառում և հարկում», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կամ «Հաշվապահական հաշվառում, «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի») բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացներ վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձը հավաստող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը և/կամ գիտական աստիճանը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2024 թվականի դեկտեմբերի 27-ից 2025 թվականի հունվարի 15-ը ներառյալ***, բացի ոչ աշխատանքային տոն օրերից, շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00-ը:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք, 4-րդ հարկ, 401 աշխատասենյակ:

Մրցույթը տեղի կունենա ***2025 թվականի հունվարի 20-ին, ժամը 11:00-ին***, հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք: